« 19 » ապրիլ 2024թ. No 2260 - Ա

«ՄԵՐՍՈՒՄ ԵՎ ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹՅՈՒՆ ՄԱՆԿԱԿԱՆ ՀԱՍԱԿՈՒՄ (0-1 ՏԱՐԵԿԱՆ) ԵՎ ՀԱՃԱԽԱԿԻ ՀԱՆԴԻՊՈՂ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ

Մայիսի 21-ից հունիսի 27-ը, 2024 թ. (կրկնողաբար), ք. Երևան («Հայաստանի կինեզիոլոգների և արհեստավարժ մերսողների ասոցիացիա» ՀԿ)

«Հայաստանի կինեզիոլոգների և արհեստավարժ մերսողների ասոցիացիա» ՀԿ, «Կինեզիոմեդ» ՍՊԸ

- Գրություն՝ 24.02-02.04
- Թիրախային լսարան՝ բուժքույրեր, բուժքույր/բուժեղբայր մերսողներ, կինեզիոլոգներ
- Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 5-10 հոգի
- մասնակիցներին շնորհել ՇՄԶ 22 տեսական և 12 գործնական կրեդիտ.
  դասընթացավարներ Արթուր Մարտիրոսյանին՝ ՇՄԶ 9 տեսական կրեդիտ, Նաիրա Ապրեսյանին՝ ՇՄԶ 13 տեսական և 12 գործնական կրեդիտ
- Կոնտակտ 091684902

Օր 1՝ մայիսի 21		
Երեխայի անատոմիաֆիզիոլոգիական առանձնահատկությունները, աճը և զարգացումը, երեխայի զարգացման փուլերը		Արթուր Մարտիրոսյան
12:00-14:30	**Դասախոսություն** Ներարգանդային զարգացում /սաղմնային՝ մինչև 3ամիս և ընկերքային՝ 3ամսից մինչև ծնունդ/: Զարգացման արտարգանդային փուլ: Նորածնային շրջան՝ մինչև 4 շաբաթ: Կրծքային շրջան՝ 1-12 ամսական Զարգացման արտարգանդային փուլ: Մսուրային շրջան՝ 1-3տ.: Նախադպրոցական շրջան՝ 3-6տ.: Վաղ դպրոցական շրջան՝ 6-11տ.: Ավագ դպրոցական շրջան՝ 12-18տ.:	
13:00-13:10	Հարց ու պատասխան	
14:20-14:30	Օրվա նյութի ամփոփում ակտիվ հարցումով	
Օր 2՝ մայիսի 22		
Երեխայի ֆիզիկական զարգացումը		Արթուր Մարտիրոսյան
12:00-14:30	**Դասախոսություն** Անթրոպոմետրիկ հետազոտություններ՝ կշիռը, հասակը, գլխի, կրծքավանդակի, որովայնի շրջագծերը: Աճի աղյուսակներ, գործող սկրինինգներ: Մանկական օրգանիզմի անատոմիաֆիզիոլոգիական առանձնահատկություններ.	

	Մաշկ, ենթամաշկային ճարպաշարակցական հյուսվածք: Ոսկրային համակարգ: Մկանային համակարգ: Շնչառական համակարգ: Սիրտ-անոթային համակարգ:
13:00-13:10	Հարց ու պատասխան
14:20-14:30	Օրվա նյութի ամփոփում ակտիվ հարցումով
Օր 3՝ մայիսի 24	
Երեխայի ռեֆլեքսներ, շարժողական ֆունկցիաները	Արթուր Մարտիրոսյան
12:00-14:30	**Դասախոսություն** Ստատիկ հավասարակշռության ֆունկցիաներ: Նստելու ունակության զարգացումը: Կանգնելու ունակության զարգացումը: Լոկոմոտոր-շարժիչ ֆունկցիաների զարգացում: Շարժումների զարգացումը հորիզոնական դիրքում /պառկած/: Քայլելու ունակության զարգացումը: Հասկացություն զարգացման արատների մասին: Կմախքի զարգացման արատներ: Գանգի, իրանի, կրծքավանդակի և վերջույթների ոսկրերի զարգացման արատներ: Մկանների զարգացման արատներ: Գաղափար մանկական ուղեղային կաթվածի մասին:
13:00-13:10	Հարց ու պատասխան
14:20-14:30	Օրվա նյութի ամփոփում ակտիվ հարցումով
Օր 4՝ մայիսի 27	
Անհետաձգելի բուժօգնություն. նպատակներն ու սկզբունքները	Արթուր Մարտիրոսյան
12:00-14:30	**Դասախոսություն** Ուշաթափություն, պատճառներն ու կլինիկական նշանները: Անհետաձգելի բուժօգնությունը ուշաթափության ժամանակ: Փսխումներ: Անհետաձգելի բուժօգնությունը փսխման ժամանակ: Ցնցումներ, պատճառներն ու կլինիկական նշանները: Անհետաձգելի բուժօգնությունը ցնցումների ժամանակ. ԿԱԴ /կողքի ապահով դիրք/ ապահովումը: Էլեկտրահարություն: Անհետաձգելի բուժօգնությունը: Վերքեր, քթային արյունահոսություն, պատճառներն ու նշանները: Անհետաձգելի բուժօգնությունը: Սալջարդ, հոդախախտ: Անհետաձգելի բուժօգնությունը: Ջերմային այրվածքներ: Անհետաձգելի բուժօգնությունը: Օտար մարմնով շնչուղիների խցանում: Անհետաձգելի բուժօգնությունը այդ դեպքերում: Անհետաձգելի բուժօգնությունը այդ տարբեր արտակարգ իրավիճակներում
13:00-13:10	Հարց ու պատասխան
14:20-14:30	Օրվա նյութի ամփոփում ակտիվ հարցումով
Օր 5՝ մայիսի 28	
Մերսման մեթոդիկան և մարմնամարզությունը երեխայի կյանքի առաջին տարում	Նաիրա Ապրեսյան
12:00-14:30	**Դասախոսություն** Մերսման հիգիենիկ պայմաններ, մերսման համար ներկայացվող պահանջներ, սանիտարահիգիենիկ պայմաններ: Մերսման ցուցումներ և հակացուցումներ, մերսման կատարման տևողություն և կրկնման հաճախականություն: Մանկական տարիքում կիրառվող մերսման հնարքներ, նրանց ֆիզիոլոգիական ազդեցությունը. շփում, տրորում, ճմլում, թրթռում, թակում:
13:00-13:10	Հարց ու պատասխան
14:20-14:30	Օրվա նյութի ամփոփում Ակտիվ հարցումով
Օր 6՝ մայիսի 30	
Մերսումը և մարմնամարզությունը 3-4 ամսական երեխաների համար	Նաիրա Ապրեսյան
12:00-13:00	**Դասախոսություն** Մերսման և մարմնամարզության ազդեցությունը, նպատակը 3-4 ամսական երեխաների համար: Տրորում: Տրորման ձևերը, ազդեցությունը, ճիշտ կատարման տեխնիկան

13:00-14:20	**Գործնական աշխատանք** Մասնակիցները փոքր խմբերի միջոցով կկատարեն՝ • Վերին վերջույթի, ստորին վերջույթի, որովայնի, մեջքի տրորում, • Ոտքերի ռեֆլեկտոր վարժություն ուղղահայաց, հորիզոնական դիրքում, • Փորի վարժություն /կեցվածքի ռեֆլեքս/, • Շրջում մեջքից փորի վրա, • Ողնաշարի ռեֆլեկտոր տարածում, ոտնաթաթի ծալում, տարածում
14:20-14:30	Հարց ու պատասխան
Օր 7՝ հունիս 4	
Մերսումը և մարմնամարզությունը 4-6 ամսական երեխաների համար	Նաիրա Ապրեսյան
12:00-13:00	**Դասախոսություն** Մերսման և մարմնամարզության ազդեցությունը, նպատակը 4-6 ամսական երեխաների համար: Ակտիվ և պասիվ վարժությունների դերը իրանի մկանների զարգացման և ամրապնդման համար: Ճմլում: Ճմլման ազդեցությունը, ճիշտ կատարման տեխնիկան: Թրթռում: Թրթռման ազդեցությունը, ճիշտ կատարման տեխնիկան: Թակում: Թակում հնարքի ազդեցությունը, ճիշտ կատարման տեխնիկան: Դիաֆրագմալ մերսման կատարման տեխնիկան: Պասիվ և ակտիվ վարժությունների կատարման տեխնիկայի ցուցադրում, կրկնման հաճախականությունը և տևողությունը
13:00-14:20	**Գործնական աշխատանք** Մասնակիցները փոքր խմբերի միջոցով կկատարեն՝ • Վերին վերջույթի, ստորին վերջույթի, որովայնի, մեջքի, ոտնաթաթի շփում, օղակաձև տրորում, ճմլում, թրթռում, թակում: • Կրծքավանդակի մերսում • Դիաֆրագմալ մերսում • Ձեռքերի խաչաձևում կրծքավանդակին և տարածում դեպի կողմերը: • Պասիվ նստեցում • Ակտիվ նստեցում • Դահուկային քայլք • Ոտքերի հաջորդական և համատեղ ծալում • Ողնաշարի և ոտքերի ռեֆլեկտոր տարածում /կեցվածքի ռեֆլեքս/ • Շրջում մեջքից փորի վրա • Ուսերի շարժում դեպի հետ և թիակների մոտեցում: • Քայլեցում • Հեծանվորդի շարժումներ • Ոտնաթաթերի վարժություն
14:20-14:30	Հարց ու պատասխան
Օր 8՝ հունիս 6	
Մերսումը և մարմնամարզությունը 6-9 ամսական երեխաների համար /չորրորդ կոմպլեքս/	Նաիրա Ապրեսյան
12:00-13:00	**Դասախոսություն** 6-9 ամսական երեխաների ֆիզիկական առանձնահատկությունները: Խաղերի կարևորությունը և նպատակը: Ոտնաթաթի մերսման առանձնահատկությունն այս հասակում: Մանկական հասակում մերսման ճիշտ կատարման տեխնիկայի ցուցադրում:
13:00-14:20	**Գործնական աշխատանք** Մասնակիցները փոքր խմբերի միջոցով կկատարեն՝ • Նախորդ կոմպլեքսի բոլոր վարժությունները • Երեխայի նստած դիրքով բոքս վարժություն • Փորի վարժություն • Աղջիկ երեխաների համար նախատեսված վարժություն

	• Տղա երեխաների համար նախատեսված վարժություն	
14:20-14:30	Հարց ու պատասխան	
Օր 9՝ հունիս 11		
Մերսումը և մարմնամարզությունը 9-12 ամսական երեխաների համար /հինգերորդ կոմպլեքս/		Նաիրա Ապրեսյան
12:00-13:00	**Դասախոսություն** Երեխայի ստատիկ ֆունկցիայի զարգացումը: Տարբեր նպատակային, այլ համագործակցված շարժումներ: Վարժություններ, որոնց կատարման համար օգտագործվում են առարկաներ՝ օղակներ, փայտյա ձողիկներ: Բանավոր խոսքը, հրահանգները /կանգնի՛ր, պառկի՛ր, ձեռքս տու՛ր/ որպես օգնող միջոց: Ստորին, վերին վերջույթների, իրանի մկանների ամրապնդման համար կատարվող ակտիվ վարժությունների և շնչառության խորացմանը նպաստող վարժությունների ցուցադրում: Վարժությունների կատարման նպատակը, կրկնման հաճախականությունը և տևողությունը	
13:00-14:20	**Գործնական աշխատանք** Մասնակիցները փոքր խմբերի միջոցով կկատարեն՝ • Նախորդ կոմպլեքսի բոլոր վարժությունները • Օղակների օգնությամբ շրջանաձև շարժումներ /պասիվ, մասամբ և ակտիվ վարժություններ/ • Նստեցում՝ մեջքի վրա պառկած դիրքից • Նստեցում օղակների օգնությամբ • Քայլեցում օղակների օգնությամբ և շարժվող որևէ ապահով առարկայից բռնած • Իրանի թեքում և ուղղում • Կքանստում՝ օղերից բռնած • Կամրջակ • Նպատակային ազատ քայլ	
14:20-14:30	Հարց ու պատասխան	
Օր 10՝ հունիս 13		
	Մանկական հասակում հաճախակի հանդիպող հիվանդությունների ժամանակ կատարվող բուժական մերսումը և մարմնամարզություն՝ բուժական ֆիզկուլտուրա: Ծուռվզություն, ծուռթաթություն:	Նաիրա Ապրեսյան
12:00-13:00	**Դասախոսություն** Ծուռվզություն: Առաջացման պատճառները: Կլինիկական արտահայտման ձևերը: Բուժման ձևերը՝ դիրքաբուժություն, ֆիզիոթերապիա, բուժական մերսում, բուժական մարմնամարզություն: Բուժական մերսման կատարման տեխնիկան, կիրառվող հնարքները, ցուցումներ, հակացուցումներ, կուրսի կրկնման հաճախականությունը, տևողությունը: Ծուռթաթություն: Բնորոշման ձևերը՝ սուպինացիա, պրոնացիա, ադդուկցիա: Առաջացման պատճառները: Կլինիկական ախտանշանները /թեթև, միջին և ծանր ձև/: Բուժման մեթոդները՝ բուժական մերսում, բուժական մարմնամարզություն, պարաֆինոթերապիա: Բուժական մերսման կատարման տեխնիկան, կիրառվող հնարքները, ցուցումներ, հակացուցումներ, կուրսի կրկնման հաճախականությունը, տևողությունը:	
13:00-14:20	**Գործնական աշխատանք** Մասնակիցները փոքր խմբերի միջոցով կկատարեն՝ • Բուժական մերսում և բուժական ֆիզկուլտուրա ծուռվզության ժամանակ • Բուժական մերսում և բուժական ֆիզկուլտուրա ծուռթաթության ժամանակ	
14:20-14:30	Հարց ու պատասխան	
Օր 11՝ հունիս 18		
X-աձև, O-աձև ոտքեր		Նաիրա Ապրեսյան

12:00-13:00	**Դասախոսություն** Օ-աձև ոտքեր: առաջացման պատճառները, կլինիկական պատկերը, բուժում՝ բուժական մերսում և բուժական ֆիզկուլտուրա: Բուժական մերսման կատարման տեխնիկան, կիրառվող հնարքները, ցուցումներ, հակացուցումներ, կուրսի կրկնման հաճախականությունը, տևողությունը: Հ-աձև ոտքեր: Առաջացման պատճառները, կլինիկական պատկերը, բուժում՝ բուժական մերսում և բուժական ֆիզկուլտուրա: Բուժական մերսման կատարման տեխնիկան, կիրառվող հնարքները, ցուցումներ, հակացուցումներ, կուրսի կրկնման հաճախականությունը, տևողությունը
13:00-14:20	**Գործնական աշխատանք** Մասնակիցները փոքր խմբերի միջոցով կկատարեն՝ • Բուժական մերսում և բուժական ֆիզկուլտուրա Օ-աձև ոտքերի ժամանակ • Բուժական մերսում և բուժական ֆիզկուլտուրա Հ-աձև ոտքերի ժամանակ
14:20-14:30	Հարց ու պատասխան
Օր 12՝ հունիս 20	
Կոնքազդրային հոդի դիսպլազիա, հարթաթաթություն	Նաիրա Ապրեսյան
12:00-13:00	**Դասախոսություն** Կոնքազդրային հոդի դիսպլազիա: Առաջացման պատճառները, կլինիկական ախտանշանները, ձևերը, բարդության աստիճանները ախտորոշում, ռենտգեն հետազոտություն, բուժում՝ բուժական մերսում, բուժական ֆիզկուլտուրա: Հարթաթաթություն: Առաջացման պատճառները, կլինիկորեն արտահայտման ձևերը, բարդության աստիճանները, ախտորոշման ձևերը, բուժում՝ բուժական մերսում, բուժական ֆիզկուլտուրա
13:00-14:20	**Գործնական աշխատանք** Մասնակիցները փոքր խմբերի միջոցով կկատարեն՝ • Բուժական մերսում և բուժական ֆիզկուլտուրա կոնքազդրային հոդի դիսպլազիայի ժամանակ: • Բուժական մերսում և բուժական ֆիզկուլտուրա հարթաթաթության ժամանակ
14:20-14:30	Հարց ու պատասխան
Օր 13՝ հունիսի 25	
ԲՖկ-ն մանկական ուղեղային պարալիչի ժամանակ (ՄՈՒԿ)	Նաիրա Ապրեսյան
12:00-13:00	**Դասախոսություն** Մանկական ուղեղային կաթված, տեսակները: Կլինիկական ախտանշանները, ախտորոշում, բուժում
13:00-14:20	**Գործնական աշխատանք** Փոքր խմբերի և դերային խաղերի մեթոդներով մասնակիցները, պահպանելով օրգանիզմի բեռնվածությունը, չափավորումը, հիգիենայի և անվտանգության կանոնները, կտիրապետեն ՄՈՒԿ-ի ժամանակ կիրառվող՝ • ակտիվ վարժություններին, • պասիվ վարժություններին, • բուժական մերսման մեթոդիկային
14:20-14:30	Հարց ու պատասխան
Օր 14՝ հունիսի 27	
Ընդհանուր թեմայի ամփոփում: Գիտելիքների ստուգում հարց ու պատասխանների և գործնական առաջադրանքների միջոցով	Նաիրա Ապրեսյան
12:00-13:00	**Դասախոսություն** Գիտելիքների ստուգում հարց ու պատասխանների միջոցով
13:00-14:30	**Գործնական աշխատանք** Գիտելիքների ստուգում գործնական առաջադրանքների միջոցով